

# ՖՐՈՄՈՆ ԿՐՏՍԵՐ

ԵՐ

## ՌԻՍԼԷՐ ԱՒԱԳ

VI

Նա խոստացել է չը կրկնել այլ եւա.

Ո՞հ, ոչ, նա այլ ևս այդպիսի բան չի անիլ: Պաղական ոստիկանը կարող է հանգիստ լինել: Երկիւզ չը կայ, որ նա կրկնի իր արածը: Ամենիդ առաջ, ինչպէս պէտք է նա գնայ մինչև գետը, քանի որ այժմ այլ ևս չի կարողանում վեր կենալ անկողնից: Եթէ պ: Պաղական ոստիկանը նրան տեսնէր այժմ, այլ ևս կասկածով չէր վերաբերուիլ նրա խոստաման: Ճիշտ է, այն՝ մեռնելու կամքը, փափագը, որ այնքան օրհասական կերպով գրուած էր նրա գունատ կերպարանքի վրայ այն առաւտ, գեռ ևս երեսում է նրա ամբողջ էութեան մէջ, բայց այժմ՝ նա աւելի մեղմ, աւելի հեղ արտայայտութիւն է ստացել: «Մի ոմն Դըլօրէլը» գիտի, որ մի քիչ, շատ քիչ անցած ինքը այլ ևս ոչինչ չի ունենալ բաղձալու:

Բժիշկները կարծում են, թէ թոքերի բորբոքումից է նա մեռնում: Իր թէ չորերը թաց մնալուց մրսել է: Բժիշկները սխալում են: Թոքերի բորբոքում չէ այդ: Ուրեմն սէրն է նրան սպանողը... Ոչ: Այն սարսափելի զիշերից յետոյ նա այլ ևս չի մտածում Ֆրանցի մասին, նա այլ ևս իրան արժանի չի համարում ոչ սիրելու, ոչ էլ սիրուելու: Նրա անարատ կեանքի մէջ այսուհետեւ մի բիծ կայ, և ահա թէ ինչու է նա մեռնում:

Այն սարսափելի զրամայի յնդեղումներից իւրաքանչիւրը մի տեսակ արատ է նրա մաքի համար,—ջրից գուրս գալը այն տեղի բոլոր մարդկանց առաջ, յոզնած քունը թաղական ոստի-

կանատանը, այնտեղ լսած անվայել երգերը, վառարանի առաջը տաքացող խենթ կինը, այն բողոք անառակ, ախտաւոր և զարհուրելի բաները, որոնց կողքով նա անցաւ զլիաւոր ոստիկանատան սանդուխի վրայ, և յետոյ՝ մի քանի հայեացքների արհամարհանքը, միւսների լպիրչութիւնը, իր ազատողի կատակները, ոստիկանի սիրախօսութիւնները, իր կանացի ամօթիածութիւնը ընդ միշտ խախտուած, անունը յայտնելու անհրաժեշտութիւնը, վերջապէս իր կաղութիւնը, որ նրան ճնշում էր իր երկար նահատակազրութեան բոլոր շրջաններում, իբրև մի հանգամանք, որ աւելի ևս ծիծաղելի էր գարձնում նրա սիրապատճառ ինքնասպանութիւնը...

Ես ձեղ ասում եմ, որ նա մեռնում է ամօթից: Գիշերային զառանցանքների ժամանակ նա կրկնում է շարունակ,—«Ամաչում եմ... Ամաչում եմ...»,—իսկ հանգստութեան բոպէններին խրում է անկողնի մէջ, վերմակները քաշում է երեսին, կարծես թէ ուղում է ծածկուել կամ թաղուել նրանց մէջ:

Դէղբեկի անկողնի կողքին, պատուանի լոյսի առաջ, տիկին Դըլօբէլը աշխատում է և միենցն ժամանակ խնամում իր հիւանդ աղջկան: Երբեմն-երբեմն նա բարձրացնում է աշքերը, զնուում է աղջկայ համբ յուսահատութիւնը, այդ անքացարեկի հիւանդութիւնը, յետոյ իսկոյն սկսում է նորից աշխատել: Ի՞նչ արած. չքաւոր մարդկանց ամենամեծ ցաւերից մէկն էլ այն է, որ ազատ ժամանակ չունեն իրանց վշտին անձնատուր լինելու: Պէտք է շարունակ աշխատել, պէտք է մտածել անյետածգելի կարիքների, կեանքի գիւղարութիւնների մասին նոյն իսկ այն ժամանակ, երբ մահը սաւառնում է մարդուս շուրջը:

Հարուստը կարող է խորասուզուել իր վշտի մէջ, անձնատուր լինել նրան, ապրել նրանով, ոչինչ չանել բացի վշտանալուց ու լալուց:

Զքաւորը ոչ հնարաւորութիւն ունի, ոչ իրաւունք՝ այդպէս անելու: Իմ հայրենի գաւառում, մի գիւղում, ես ճանաչում էի մի պառաւ կնոջ, որի աղջիկը և ամուսինը մեռել էին մի տարուայ ընթացքում, իրար յետեից երկու սարսափելի աղէտ բերելով նրա զլիին, բայց նա զաւակներ ունէր մեծացնելու, ազարակ ունէր կառափարելու: Լուսաբացից սկսած պէտք էր զբաղուել ամեն բանի համանել, զեկավարել զանազան տեսակ աշխատանքներ, որոնք ցրուած էին հանդում մի քանի մղոն հեռու իրարից: Վշտահար այրին ասում էր ինձ. «Եթ օրերը մի ազատ բապէ չունեմ լալու համար, բայց կիրակինները, օօ, կիրակինները ես տեղը հանում եմ...» Եւ յիրաւի, կիրակի օրերը, մինչ երե-

խաները խաղում կամ՝ զրօնում էին դրսեսւմ, նա կէս օրից յետոյ պինդ կողպւում էր իր սեննակում և մինչև երեկոյ ամայի տան մէջ գոռգոռում, հեկեկում էր ու կանչում իր ամուսնուն ու աղջկան:

Տիկին Դըլօրէլը նայն իսկ կիրակի օրերը աղատութիւն չունէր: Զէ որ այժմ նա մէն-մենակ պէտք է աշխատէր, չէ որ նրա մատները չունէին Դէզիրէլի նուրբ մատների չնաշխարհիկ ճարտարութիւնը, չէ որ գեղերը թանգ արժէին, և, թէկուզ աշխարհը կործանուէր, նա չէր ուզիլ զրկել «հայրիկին» նրա սիրելի սովորութիւններից մէկից: Ուսափ որ ժամին էլ հիւանդը բանար աջերը, և առաւտեան ազօտ ցոլքով, և աքնութեան լամպի լոյսով, նա տեսնում էր մօրը աշխատելիս, անվերջ աշխատելիս:

Երբ անկողնի առագաստները ծածկուած էին լինում, նա լուսմ էր սեղանի վրայ դրուող մկրատի չոր ու մետաղյին հընչիւնը:

Մօր այդ յոգնատանջ աշխատանքը, այդ մշտական անքնութիւնը, որ անբաժան էր իր տեսնդից, մի նոր տանջանք էր խեղճ հիւանդի համար: Երբեմն այդ ցաւը մոռացնել էր տալիս միւս բոլոր ցաւերը:

—Աշխատանքս տուր ինձ տեսնենք,—ասում էր նա փորձելով նստել անկողնում:

Այդ՝ լուսաւոր բոպէներ էին օրէցօր թանձրացող խաւարի մէջ: Տիկին Դըլօրէլը, որին՝ հիւանդի այդ ցանկութիւնը վերակենդանալու բաղձանք էր թւում, ամենայն հոգածութեամբ սատեցնում էր նրան ու մօտեցնում սեղանը: Բայց ասեղը շատ ծանր էր, աջերը շատ թոյլ էին, և սալայատակի վրայով անցնող կառքերի ամեն մի դղրդոց, փողոցից բարձրացող բոլոր աղաղակները՝ յիշեցնում էին Դէզիրէլին, որ փողոցը, լիրը փողոցը բոլորովին մօտ է նրանից: Զէ, անկատկած էր, որ նա այլ ևս ոյժ չունէր ապրելու: Ա՛խ, եթէ նա կարողանար մենանել ու յետոյ վերածնուել... Բայց այդ անհնար էր, և նա համգչում էր կամաց-կամաց, համակուելով գերազոյն անձնուրացութեամբ: Մայրը շուտաշուտ նայում էր աղջկան և տեսնելով, որ քանի զնում՝ աւելի ու աւելի է գունաւում, հարցնում էր:

—Ի՞նչպէս ես:

—Շատ լաւ... պատասխանում էր հիւանդը կակծալից ժպիտով, որ մի բոպէով փայլեցնում էր նրա ցաւատանջ դէմքը, ցոյց տալով նրա բոլոր աւերումները, ինչպէս որ աղքատի բնակարանը ընկած արեւ, փոխանակ ուրախ տեսք տալու նրան, ընդհակառակը, աւելի ևս որոշակի է ցոյց տալիս նրա մոալլու-

թիւնն ու լերկութիւնը։ Այսուհետեւ երկուան էլ լռում էին երկար ժամանակ։ մայրը՝ լալու անից, աղջիկը՝ բռնուած տեսդից ու արդէն պարուրուած այն անտեսանելի քօղերով, որոնցով մահը մի տեսակ զթառատութեամբ պատում է մեռնողներին, որպէս զի կարողանայ ընկճել նրանց ոյժերի վերջին մնացորդները և որքան կարելի է հանգիստ տանի նրանց, առանց որ և է զիմադրութեան։

Հոչակաւոր Գըլօրէլը երբէք տանը չէր նստում։ Նա ոչ մի փոփոխութիւն չէր մտցրել այն անպաշտօն դերասանի կեանքի մէջ, որ վարում էր միշտ, եւ սակայն նա գիտէր, որ իր աղջիկը մեռնում է. բժիշկը նախազգուշացրել էր նրան։ Այդ նոյն իսկ սաստիկ յուզել էր նրան, որովհետեւ, իսկապէս ասած, նա սաստիկ սիրում էր իր զաւակին. բայց այդ օտարութի բնաւորութեան մէջ ամենախսկական, ամենասանկեղծ զգացմունքները կեղծ ու անբնական կերպարանք էին ընդունում, այն բնական օրէնքով, որի համաձայն թեք տախտակի վրայ գրուած բաները չեն կարող երբէք ուղիղ դիրք ունենալ։

Գըլօրէլի համար ամենազլիսաւորը այն էր, որ ամեն տեղ ցոյց տար իր վիշար։ Բուլվարի մի ծայրից մինչև միւսը նա դժբախտ հօր գեր էր ներկայացնում։ Նրան հանդիպում էին թատրոնների մօտերքում և դերասանների սրճարաններում կարմըրած աշխերով և գունատ դէմքով։ Նա շատ սիրում էր այնպէս անել, որ հարցնեն. «Հօ, ծերուկա, ի՞նչպէս է աղջիկդ»։ Եւ այն ժամանակ նա թափ էր տալիս զլուխը ջղային շարժումով, ինձուում էր դէմքը ու սլմում բերանը, իբր թէ արցունքն ու անէծքները զսպելով, և լուռ հայեացքով ու լի ցասումով շանթահարում էր երկինքը, ինչպէս «Երեխանների բժիշկը» խաղալիս։ Բայց այդ բոլորը չէր խանգարում նրան ամենասիրալիր ուշադրութեամբ ու կամակատարութեամբ վերաբերուել իր աղջկան։

Այդպէս, նա սովորութիւն էր դարձել նրա հիւանդանալու օրից ի վեր ծաղիկներ բերել նրան իր զքօսանքներից յետոյ. և նա չէր բաւականանում սովորական ծաղիկներով, համեստ մանիշակներով, որ ծախում են փողոյի բոլոր անկիւններում աղքատիկ քաւակների համար։ Այդ աշնանային տիսուր օրերին նա փստում էր վարդեր, մեխակներ, մանաւանդ սպիտակ եղբեանիներ, այն ջերմոյային եղբեանիներից, որոնց ցուզունն ու տերենները միւնոյն կանաչաւուն սպիտակութիւնն ունեն, կարծես թէ բնութիւնը շտապելու պատճառով գործ է դրել միայն մի տեսակ գոյն։

—Օ՞հ, այդ չափազանց է... չափազանց... տեսէք, կը

բարկանամ,—ամեն անգամ ասում էր հիւանդը, տեսնելով, թէ ինչպէս է նա յաղթական կերպով ներս մտնում փունջը ձեռքին. բայց հայրը այնպիսի մեծ-աղայական կերպարանքով էր ասում «Թող տուր...» թող տուր..., որ նա այլ ևս չէր կարողանում պնդել իր ասածի վրայ:

Եւ սակայն ահապին ծախս էր պահանջում այդ, իսկ իսեղն մայրը սարսափելի տանջուում էր, որ կարողանայ բոլորի համար հաց վաստակել:

Բայց տիկին Դրլօրէլը ոչ միայն չէր տրանջուում այդ բանից, այլ ընդհակառակը, գանում էր, որ այդ շատ հիմնալի բան է իր մեծ մարդու կողմից:

Նա զմայլում էր այդ արհամարհանքից դէպի փողը, այդ գերազանց անհօգութիւնից, և աւելի քան երբէք հաւատում էր իր ամուսնու հանճարին և գերասանական ապագային:

Մի զիշեր Դէզիրէն քնից՝ վեր թռաւ սաստիկ տարօրինակ վիճակի մէջ; Պէտք է ասել, որ նախընթաց օրը բժիշկը, այցելութեան գալով, սաստիկ զարմացած էր մնացել տեսնելով նրան յանկարծ կենդանացած ու աւելի հանգստացած և ջերմը բոլորովին իջած; Առանց հասկանալու այդ անակնկալ վերակենդանութեան պատճառը, նա հեռացել էր, ասելով «Սպասենք», յայսը գնելով երիտասարդութեան արագ կազդուրումների, ներքին հիւթերի այդ հրաշալի սյմֆի վրայ, որ յաճախ նոր կեանք է պատուաստում նոյն իսկ մահուան նշանների վրայ; Եթէ նա նայէր Դէզիրէյի բարձի տակը, այնտեղ կը գանէր Գահիրէյի դրոշմով մի նամակ, որ միակ պատճանն էր այդ սւրախափթ փոփոխութեան; Մի նամակ, բազկացած չորս էջից և Ֆրանցի ստորագրութեամբ, որ բացատրում էր ու խոստովանում իր սիրելի Զիզիին իր ամբողջ վարմունքը:

Հէսց այդպիսի նամակ էր երազում հիւանդը, եթէ նոյն իսկ ինքը թելադրած լինէր նամակը, այդքան լիովին արտազայտուած չէին լինի այն խօսքերը, որոնք պէտք է շարժէին նրա սիրաը, և այն բոլոր քնոքոյ ներողութիւնները, որոնք պէտք է սպեղանի լինէին նրա վէրքերին Ֆրանցը զզջումն էր յայտնում, ներողութիւն էր խնդրում, և, առանց ոչինչ խոստանալու նրան, առանց մանաւանդ որ և է բան խնդրելու նրանից, պատմում էր իր հաւատարիմ մտերմին իր մաքասումները, խղճի խայթոցները, քաշած տանջանքները; Նա զայրոյթավ էր խօսում Սիրոնիի մասին, խնդրում էր Դէզիրէյին չը հաւատալ նրան, և ոխակալութեամբ, որ սրատես և ահուելի էր չնորհիւ հին կրթուսէրին, նա զգուշացնում էր նրան այդ փչացած ու վայր ի վերոյ ընաւորութիւնից, այդ անշեշտ ձայնից, որ կարծես սաեղծուած

էր ստելու համար և որի մէջ երբէք չէր լսուել սրախց բղխած մի հնչեմ, որովհետեւ նա գլխից էր դաւրս գալիս, ինչպէս այդ պարփղեան տիկնիկի բոլոր մոլեգին ձգտումները:

Ո՞րքան ցաւալի բան էր, որ այդ նամակը մի քանի օր շուտ չէր ստացուել: Այժմ այդ բոլոր քաղցր խօսքերը նոյնն էին Դէզիրէի համար, ինչ որ հիմնալի կերակուրները, երբ շատ ուշ են հասցնում սովամահ եղողին: Նա հոտոտում է կերակուրները, փափագում է ուտել, բայց այլ ես ոյժ չունի ուտելու: Ամբողջ օրը հիւանդը կարդում էր ու նորից կարդում նամակը: Նա հանում էր նամակը ծրարից, յետոյ սիրազին ծալում, և փակած աշքերով տեսնում էր ամբողջապէս, մինչև իսկ նամականիշի գոյնը: Ֆրանցը մտածել էր նրա մասին: Այդ բաւական էր նրան ներշնչելու քաղցր անդորրութիւն, որի շնորհիւ նա վերջապէս գուն եղաւ՝ այսպիսի տպաւորութեամբ, որպէս թէ մի մտերիմ բազուկ յենարան էր դարձել նրա թոյլ գլխին:

Յանկարծ նա զարթնեց, ինչպէս ասացինք մի քիչ առաջ, տարօրինակ վիճակի մէջ: Մի տեսակ թուլութիւն, անձկութիւն, ինչոր անբացատրելի բան էր զգում նա իր ամբողջ էութեան մէջ: Նրան թւում էր, թէ ինքը կապուած է կեանքի հետ միայն մի մազանման թելով, որը այնքան ձգուած է, որ քիչ է մնում կտրուի, և որի ջղային երերումները նրա բոլոր զգայարանքներին տալիս էին գերբնական նրառութիւն ու սրութիւն: Դեռ զիշեր էր: Նրա պառկած սենեակը—նրան տուել էին իր ծնողների սենեակը, որ աւելի օգաւէտ էր, աւելի ընդարձակ, քան իր փոքրիկ ննջախորշը—կիսով չափ ստուերի մէջ էր: Գիշերային լամպը ցոլացնում էր առաստաղի վրայ իր լուսաւոր ցշանները, այդ իւրատեսակ մելամաղձիկ Մեծ-Արջի համաստեղութիւնը, որ զբաղեցնում է հիւանդներին անքուն գիշերները, իսկ աշխատութեան սեղանի վրայ՝ ցածացրած և լուսամֆոփով սահմանափակուած լամպը լուսաւորում էր միմիայն ցիր ու ցան ձեռագործը և բազկաթոռում նըզըզած տիկին Դըլօբէլի կերպարանաստուերը:

Դէզիրէի զլխում, որ այժմ իրան սովորականից թեթև էր թւում, յանկարծ մտքերի ու յիշողութիւնների մի սաստիկ իւրաբանցում սկսուեց: Իր կեանքի ամենահնեռաւոր կէտերը կարծես մօտեցել էին նրան: Մանկութեան ամենահնչին գէպերը, այնպիսի իրողութիւններ, որ այն ժամանակ չէր կարողացել հասկանալ, կարծես երազում լսուած խօսքեր՝ հանդէս էին եկել այժմ նրա մտքի առաջ:

Խեղճ աղջիկը մնացել էր ապշած ու սարսափած: Նա չը գիտէր, որ մահուան պատճառած վերջնական չքացումից առաջ,

մարդիկ յաճախ ունենում են տարօրինակ գերազրգուման այդպիսի մի բոլէ, որպէս թէ մարդուս ամրող էութիւնը յուսահատօրէն լարում է իր բոլոր ընդունակութիւնները և ոյժերը օրհասական և անգիտակից մաքառման մէջ:

Իր անկողնից նա տեսնում էր հօրն ու մօրը, մէկին՝ իր կողքին, միւսին՝ արհեստանոցում, որի դուռը բաց էին թողել, Տիկին Դըլօրէլը մեկնուել էր իր բազկաթոռում՝ վերջապէս ուշադրութեան արժանացած երկարատես յոդնածութեան լքումով. այն բոլոր սպիները, սրի հարուածների այն բոլոր հետքերը, որ ժամանակը ու տառապանքը թողնում են պառաւած դէմքերի վրայ, տիսրագին ու անջինջ երեսում էին քնի մեղկութեան մէջ, ծերեկուայ ընթացքում՝ մարդուս կամքը և հոգսերը մի տեսակ դիմակ են գնում դէմքի իսկական արտայայտութեան վրայ. բայց գիշերը տալիս է դէմքերին նրանց իսկական տեսքը: Այդ ըսպէին՝ պարզ երեսում էին այդ կորովի կնոջ խոր կնճիռները, կարմրած կոսկերը, քունքերի մօտ ցանցառացած ու սպիտակած մազերը և կծկուած յոդնատանջ ձեռքերը: Եւ Դէղիրէն տեսաւ այդ բոլորը: Ո՞քան կ'ուզէր նա ոյժ ունենալ վեր կենալու և համբուրելու մօր սիրուն ու անդորր ճակատը, որ ակոսուած էր կնճիռներով, բայց մնում էր յստակ:

Իբր կատարեալ հակապատկեր, կիսարաց դռան միջով հրեսում էր հոչակաւոր Դըլօրէլը, որ նստած էր իր սիրած դիրքերից մէկը ընդունած: Երեք քառորդի չափով դարձած դէպի սեղանը ծածկող սպիտակ սփռոցը, նա ընթրիք էր անում և միենոյն ժամանակ աչքի անցնում մի զրբոյկ, որ դէմ էր տուել ջրի շնին: Մեծ մարդը նոր էր վերացարձել.—Երեխ, հէնց նրա ոտնաձայնն էր զարթեցրել հիւանդին,—և, դեռ բոլորովին յուզուած մի գեղեցիկ ներկայացման չարժումից ու ազմուկից, մէն-մենակ ընթրում էր լրջօրէն ու հանգիստուոր կերպով, սըդմուած իր նոր սիւրտուկի մէջ, անձեռոցիկը կզակի տակից ամրացրած, մազերը ունելիքով խուճում զրած:

Առաջին անգամ իր կեանքում Դէղիրէն նկատեց այդ զարմանալի ներհակութիւնը իր ուժասպաս մօր մէջ, որի անշնորհք սև շորերը կախ էին ընկնում վրայից, աւելի ևս նիհար ու մաշուած ցոյց տալով նրան, և իր երջանիկ, մսում կորած, անզործ, հանգիստ ու անհոգ հօր մէջ: Մի հայեացքով նա հասկացաւ այդ երկուսի կեանքի տարբերութիւնը: Այն սովորութիւնների շրջանակը, որի առանձնայատուկ լոյսախն, վերջ ի վերջոյ, ընտելանում են երեխաների աչքերը, այնպէս որ նրանք դադարում են այլ ևս շատ պարզ տեսնելուց, չքացել էր նրա համար: Այժմ նա որոշ տարածութիւնից էր դատում իր ծնողների մասին, կար-

ծես թէ անդդալի կերպով հեռանալով նրանցից։ Վերջին ժամուայ այդ պարզատեսութիւնն էլ մի նոր տանջանք էր նրա համար։ Ի՞նչ էր լինելու նրանց վիճակը իր մահից յետոյ։ Կամ մայրը աշխատելու է ուժից վեր ու մեռնելու ուժասպառութիւնից, կամ թէ խեղճ կինը ստիպուած է լինելու հրաժարուել որ և է աշխատանքից և նրա եսական կողակիցը, որ միշտ զբաղուած է իր թատրոնական մասփառութեամբ, թողնելու է, որ նրանք երկուսով փոքր առ փոքր խրուեն ծայրայեղ աղքատութեան մէջ, այդ սև գուրքի մէջ, որ՝ որքան մարդ աւելի է իջնում՝ անքան աւելի լայնանում է ու խորանում։

Եւ սակայն նա չարասիրատ մարդ չէր, նա այդ ապացուցել էր նրանց շատ անգամ։ Միայն թէ նա բոլորովին կուրացած էր և ոչ մի բան չէր կարողացել փարատել այդ կուրութիւնը... իսկ եթէ ինքը փորձէր, Եթէ նախ քան շունչը փչելը,—սիրաը վկայում էր, որ այդ շուտով կը լինի,—եթէ նախ քան շունչը փչելը ինքը պոկէր այն հասաւ ակնակապը, որ այդ խեղճ մարդը կամաւ և զօրով պահում էր իր աչքերի վրայ։

Միմիայն իր ձեռքի նման թեթե, սիրագին ձեռք կարող էր փորձել պոկէր այդ կապը։

—Հաց վաստակիր... Ձեռք քաշիր թատրոնից։

Եւ որովհետեւ պէտք էր շտապել, Դէզիրէ Դըլօրէլը զինուեց իր ամբողջ քաջութեամբ և մեղմ ձայնով կանչեց։

—Հայրիկ... Հայրիկ...

Սոլլկայ ձայնը լսելուն պէս մեծ մարդը վազէվագ եկաւ նրա մօտ։ Այդ երեկոյ մի առաջնեկ ներկայացում էր եղել Ամբիգիւ թատրոնում և նա վերադարձել էր այնտեղից բորբոքուած, էլեքտրացած։ Զահերը, ծափհարները, խօսակցութիւնները միջանցքներում, այն բոլոր զրգոիչ մանրամասնութիւնները, որոնցով սնունդ էր առնում նրա մոլութիւնը, այդ օրը աւելի էին յափշտակել նրան, քան երբ և իցէ։

Նա մտաւ Դէզիրէյի սենեակը, ճաճանչափայլ ու վեհ կերպարանքով, լամպը ձեռքին ուղիղ բռնած և մի կամելիա խրած կոճակի մէրքին։

—Բարի երեկոյ, Զիզի, Քնած չես ուրեմն։

Եւ նրա խօսքերի ուրախ եղանակը տարօրինակ կերպով հնչեց այդ տխուր շրջապատի մէջ։

Դէզիրէն ձեռքով նշան արեց նրան, որ լոի, ցոյց տալով, որ մայրը քնած է։

—Վայր զբէք լամպը... խօսելիք ունեմ ձեզ հետո։

Նրա ձայնը, որ խղւում էր յուզմունքից, զարմացրեց հօրը,

նոյնպէս և աչքերը, որոնք լայն բացուած էին և ինչոր սրաթափանց հայեացքով էին նայում, հայեացք, որ նա երբէք չէր տեսել աղջկայ աշքերում:

Մի քիչ շփոթուած այդ բանից, նա մօտեցաւ հիւանդին, կամնիխան պատրաստ բռնած նրան տալու համար, բերանը կլոր կուշ ածած և նոր կօշիկների ճռճռոցով, որ նա շատ արիստոկրատական բան էր համարում: Նրա գիրքը ակներեարար բռնազրոսիկ էր, և այդ առաջանում էր անշուշտ այն չափանց մեծ հակապատկերից, որ կազմում էին փայտուն և աղմբեկալից թատրոնական դահլիճը, որտեղից նա նոր եկել էր, և հիւանդի այդ փոքրիկ սենեակը, ուր խրացրած ձայները և ցածրած լամպերի լոյսը քանում էին տենդոտ մթնոլորտի մէջ:

—Ի՞նչ է պատահել, հոգեակս... Վատ ես զգում քեզ!

Դէզիրէն իր փոքրիկ ու գունատ զլիսի թեթև շարժումով պատասխանեց, որ յիրաւի վատ է զգում իրան և կ'ուզէր խօսել նրա հետ բոլորովին մօտիկից: Երբ որ հայրը մօտեցաւ նրա զլիսավերեկին, նա զրեց իր կրակի պէս վաստող ձեռքը մեծ մարդու բազուկին և շնչաց նրա ականջին... Նա շատ վատ էր զգում իրան, չափազանց վատ: Նա շատ լաւ հասկանում էր, որ այլ ես երկար չէ ապրելու:

—Այն ժամանակ, հայրիկ, դուք բոլորովին մենակ կը մնաք մայրիկի հետ... Ինչո՞ւ էք դողում այդպէս... Դուք զիտէիք, որ այսպէս պէտք է լինի, որ նոյն իսկ շուտով է լինելու այսպէս... Միայն թէ ես ուզում եմ ձեղ ասել... Իմ մահից յետոյ, վախենում եմ, որ մայրիկը չը կարողանայ մենակ պահել տունը... Տեսէք, բնչպէս գունատ ու յոդնած է նա:

Դերասանը նայեց իր տառը կնոջ վրայ և կարծես սաստիկ զարմացաւ, տեսնելով, որ յիրաւի գէմքը շատ անասող էր Յետոյ նա միսիթարեց ինքն իրան նկատելով եսականօրէն.

—Նա շատ էլ առողջ չի եղել երբէք...

Այդ նկատողութիւնը և այն եղանակը, որով նա արեց այդ նկատողութիւնը, զայրացրին Դէզիրէյին ենրան ամրապլնոցին իր վճռի մէջ: Նա շարունակեց, առանց աշխատելու ինայշել դերասանի մտապատրանքներին.

—Ի՞նչ է լինելու ձեր երկուսիդ վիճակը իմ մահից յետոյ... Այո, ես զիտեմ, որ դուք մեծ յոյսեր էք տածում, բայց ահա որքան տարի է նրանք չեն իրագործւում: Այն, ինչ որ դուք այդքան երկար ժամանակ սպասում էք, կարող է էլլ ուշանալ, իսկ ինչ պէտք է անէք դուք մինչև այն ժամանակ... Լսէք, սիրելի հայրիկ, ես չէի ուզի ձեղ ցաւ պատճառել, բայց ինձ թըւում է, որ ձեր հասակում և ձեր խելքով դուք հեշտութեամբ

կարող էիք... Պ. Խիսլէր աւագը, վստահ եմ, ամեն կերպ կա-  
ջակցէր...

Նա խօսում էր դանդաղ կերպով, ճիգ գործ դնելով, բա-  
ռեր փնտուելով, երկար լռելով ամեն մի նախադասութիւնից  
յետոյ, յուսալով, որ իր կիսաս թողածը կը լրացնի հայրը մի  
շարժումով, մի բացականչութեամբ: Բայց դերասանը չէր հաս-  
կանում նրա միտքը: Նա ականջ էր դնում, նայում էր նրան  
կոկոն աշքերը լայն բացած, անորոշ կերպով զգալով, որ այդ  
անմեղ ու անողոք մանուկի խոճից ինչ որ մեղադրանք է  
բարձրանում իր դէմ: սակայն նա չը գիտէր, թէ ինչ մեղադրանք  
է այդ:

—Իսձ թւում է, որ դուք լաւ կ'անէիք, —անհամարձակ շա-  
րունակեց Դէղիբէն, —իսձ թւում է, որ դուք լաւ կ'անէիք, ե-  
թէ հրաժարուէիք...

—Հօք... ինչ... ինչպէս...

Հիւանդը կանգ առաւ տեսնելով, թէ ինչ տպաւորութիւն  
գործեցին հօր վրայ իր խօսքերը: Ծեր դերասանի շարժուն դէմ-  
քը յանկարծ կծկուեց սաստիկ յուսահատութիւնից, և կսկիծը  
այն սաստիճան սղմում էր կոկորդը, որ աշքերը լցուեցին ար-  
ցունքներով, իսկական արցունքներով, որ նա նոյն իսկ չէր աշ-  
խատում ծածկել ձեռքի կռակով, ինչպէս անում են բեմում:  
Թշուառականը սկսում էր հասկանալ... Այդպէս ուրեմն նրա  
փառքից երես էր թեքում մէկը այն երկու անձնաւորութիւն-  
ներից, որոնք նրա տաղանդի միակ հաւատարիմ երկրպագուներն  
էին մնացել: Իր աղջիկը այլ ևս չէր հաւատում նրա տաղան-  
դին: Բայց չէ, այդ անկարելի բան էր: Նա, անշուշտ, լաւ չէր  
լսել, լաւ չէր հասկացել... Ինչից լաւ կը լինի որ նա հրաժա-  
րուի, թող ասի տեսնենք... Բայց Դէղիբէն սիրտ չարեց վերջա-  
ցնել իր ասելքը, տեսնելով հօր համը հայեացքը, որ ինդրում  
էր ինայել իրան: Բացի այդ, խեղճիկի ոյժերը և չունչը սպառ-  
ւում էին արդէն:

Նա շնչաց երկու, երկը անդամ.

—Եթէ հրաժարուէիք... հրաժարուէիք...

Յետոյ նրա փոքրիկ գլուխը վայր ընկաւ բարձի վրայ, և  
նա մեռաւ, առանց սիրտ մանելու ասել հօրը, թէ ինչից լաւ կը  
լինէր որ նա հրաժարուէր...

Մի ոմն Դըլօքէլը մեռաւ, պ. թաղապետ: Ես որ ասում  
էի, թէ նա այլ ևս չի կրնի: Այս անդամ մահը ազատեց նրան  
փողոցներով գնալու նեղութիւնից: Ինքը եկաւ նրան տանելու:  
Եւ ահա, թերահաւատ մարդ, սոճիի չորս տախտակներ, մնիս-

բով պինդ ամրացրած, զրաւական են ձեր տուաջ նրա խոստման համար Նա խոստացաւ շը կրկնել այլ ես, և չի կրկնի,

Կաղիկը մնուաւ: Այդ էր ամենանոր լուրը թրան-Բուրժուա թաղում, ուր իրարանցում էր ընկել այդ տիսուր գէպքի չնորհիւ: Ի հարկէ, Դէզիրէն չէր կարող շատ ժողովրդական լինել այնտեղ, քանի որ երբէք տանից դուրս չէր գալիս և շատ ուշուշ էր երևում տիրատես պատուհանում իր ճգնաւորական գունատութեամբ և անխոնչ աշխատաւորներին յատուկ կապտածիր աչքերով: Բայց հռչակաւոր Դըլօրէլի աղջկայ թաղմանը անշուշտ շատ գերասաններ կը լինէին, իսկ Պարիզը պաշտում է գերասաններին: Նա սիրում է տեսնել ցերեկը, արեւի, փողոցների մէջ անցնելիս՝ իր երեկոյեան կուռքերին, ուզում է դիտել նրանց իսկական կերպարանքները, ազատ՝ բնմի գերբնական պայմանների ազգեցութիւննից: Եւ յիրաւի, այդ ասաւօտ, մինչ Բագր փողոցի փոքրիկ ու նեղ դուն վերին մասը պատում էին սպիտակ պաստառներով, մուրճի ուժգին հարուածներով ամրացնելով մեխերը, հետաքրքիր բազմութիւնը լցուել էր մայթերի և սալայատակի վրայ:

Պէտք է արդարն ասել, գերասանները սիրում են մի-մեանց, կամ զոնէ արհեստակցութեան կապ, համերաշխութիւն կայ մէջները, որ նրանց համախմբում է ամեն անգամ, երբ պէտք է լինում մի ցոյց անել,—երեկոյթների, նուազահանդէսների, ընկերակցական ճաշերի, թաղումների ժամանակի:

Թէպէտ և հռչակաւոր Դըլօրէլը այլ ևս տեղ չունէր թատրոնում, թէպէտ և նրա անունը աւելի քան տասնըհինգ տարուց ի վեր բոլորովին անհետացել էր թատրոնական քննադատութիւններից և յայտարարութիւններից, բայց բաւական էր, որ մի երկտող յայտարարութիւն տալուէր մի աննշան թատրոնական թերթում, թէ Մէգի եւ Ալանօսի բատրանների նախկին դերասան Դըլօրէլը վետահար սրտով եւ ալլն... Համախմբուելու են եւ ալլն, որպէս զի Պարիզի բոլոր անկիւններից և հետաւոր ծայրերից գերասանները խումբ-խումբ շտապէին այդ կոչին:

Յայտնի ու անյայտ, հռչակաւոր ու անհռչակ, բոլորը այդտեղ էին, նրանք, որոնք խաղացել էին Դըլօրէլի հետ գաւառներում, նրանք, որոնք հանդիպում էին նրան թատրոնական սրճարաններում, ուր նա մէկն էր այնտեղ միշտ տեսնուող այն դէմքերից, որ դժուար է կապել մի անուան հետ, բայց որոնք միշտ յիշւում են չնորին այդ ոիջավայրի, որի մէջ միշտ տեսնում են նրանց և որի մի մասն են նրանք կարծես կազմում, վերջապէս, անցողակի Պարիզում դանուող զաւառական գերա-

սանսեր, որոնք եկել էին այնտեղ մի թատրոնապետ ճարելու, նպաստաւոր հրաւեր ստանալու համար:

Եւ ամենքը, թէ անյայտները, թէ հոչակաւորները, թէ պարիզեցիները, թէ գաւառացիները, մի հոգս ունէին միայն,— մի որ և է լրագրում կարդալ իրանց անունը թաղման տեղեկագրութեան մէջ: Որովհետև այդ մասին արարածների համար բայց ալի են յայտնի գառնալու բոլոր ձևերը: Նրանք այնքան վախենում են, թէ հասարակութիւնը միսում է մոռանալ իրանց, որ այն միջոցին, երբ նրանք բեմ չեն դուրս գալիս, պահանջ են զգում խօսեցնել տալ իրանց մասին, յիշեցնել տալ իրանց գոյութիւնը ամեն տեսակ միջոցներով Պարիզի յեղյեղուկ և վաղանցուկ ժողովրդական կարծիքին:

Ժամի ինսից ի վեր, Մատէի բոլոր մանր թաղականները, — այդ՝ գաւառացիներին յիշեցնող բամբասասէր բազմութիւնը, — պատուհաններում, գոներում, փողոցում խոնուած սպասում էին դերասանների անցնելուն: Արհեստանոցներում բանովները դիտում էին իրանց լուսամուտների փոշոտ ապակիների միջով, մանր բուրժուանները իրանց խաչմերուկ գցած վարագոյրների բացուածքից, տանտիրուհիները՝ զամբիւղները կռներին, արհեստաւոր աշակերտները՝ ծրաբները գլուխներին:

Վերջապէս նրանք եկան՝ որը ոտով, որը կառքով, ոմանք մենակ, ոմանք խմբով, նրանց հեշտ էր ճանաչել նրանց ածիւլած, կղակի ու թշերի կողմը կապտաժեռ՝ գէմքերից, նրանց անբնական, չափազանց փեցուուոյց՝ կամ չափազանց պարզ ձեւերից, արհեստական շարժումներից, և մանաւանդ այն ծայրայիղ սանտիմէնտալութիւնից, որ նրանց մէջ զարգանում է չնորհիւ այն չափազանց հցման, որ անհրաժեշտ է բեմական տպաւորութիւնն համար: Ճիշտ որ շատ հետաքրքրական էր դիտել այն տարբեր ձևերը, որով այդ պարոնները արտայայտում էին իրանց յուղմունքները այդ տիսուր գէսքի առիթով: Խւրաքանչիւր գերասանի մուտքը մեռելատան խճաբարած ու մութ բակը կարծու բեմնելք լինէր և տարբերում էր նայելով գերասանի ամուլուային: Առաջնակարգ ուժեղ դեր խաղացողները, չարագոյժ գէմքով, խոժուած յօնքերով, բոլորն էլ բակը մտնելիս, ձեռնոցի ծայրով սրբում էին աշքերի անկիւնից կախ ընկած արցունքը, որ այլ ևս անկարող էին պահել, յետոյ հառաջում էին, նայում էին երկնքին, և մնում էին կանգնած բեմի, այսինքն բակի մէջտեղում, գլխարկները գէմ տուած ազդրներին, թեթեակի խիելով գետնին ձախ սաները, որ նպաստում էր նրանց զսպել իրանց վիշար.—«Լուիր, լուիր, սիրտ իմ»: Կօմիկները, ընդհակառակը, բեմնելքը կատարում էին բոլորովին հասարակ կերպով:

Նրանք մօտենում էին իրար խղճուկ ու բարեհոգի կերպարանքով, միմնանց «հալևոր» էին անուանում, բարենելիս ուժին կերպով թափահարում էին իրար ձեռք, մինչ այտատակերը թուլամորթ կերպով դողդողում էին, աչքերի անկիւնները ու շրթունքների ջնակները կախ էին ընկնում, որ ֆարսի տափակութիւն էր տալիս նրանց խանդաղատանքին:

Բոլորն էլ սեթենեթ և բոլորն էլ անկեզծ...

Բակը մանելուն պէս այդ պարոնները բաժանուեցին երկու բանակի Հաչակաւոր, բախտաւոր գերասանները արհամարհանքով էին նայում անյայտ ու վնթի Ռօբրիկարներին, որոնց նախանձուաթիւնը պատասխանում էր այդ արհամարհանքին հազար ու մի կծու նկատողութիւններով.—«Տեսն էք, ինչպէս է այս ինչը ծերացել, ոյժից ընկել... Այլ ևս չի կարող երկարժամանակ պահել իր ամպլուան»:

Հաչակաւոր Դըլօրէլը ոտից գլուխ սեազգեստ ու սև ձեռնոցներով, զնում գալիս էր մի խմբից միւսը, կարմրատակած աչքերով, հուպ առուած ատամներով և լուս սզմնով սրա նրա ձեռքը: Տնաւերի միրար լիքն էր արցունքներով, բայց այդ չէր խանգարել նրան դէպքի առիթով խուճում դնել տալ մազերը և յետեից էլ բախտ լաց անել տալ ձալ Capoule: Օտարութի բնաւորութիւն, Ոչ ոք չէր կարող, նրա հոգու խորքը թափանցելով, ասել, թէ որաել է այն կէտը, ուր վերջանում է իսկական վիշտը և սկսում զուցամոլութիւնը,—այն աստիճան նրանք խառնուած էին իրար հետ... Դերասանների խմբի մէջ էին նաև մերծանօթներից մի քանիսը, պ. Շէրը, որ աւելի քան երեք վեհ կերպարանք էր ընդունել և զրադկոտ շատապողութեամբ պայուտպոյտ էր գալիս համբաւաւոր գերասանների շուրջը, մինչ տիկին Շէրը մնացել էր վերեւում վշտանար տիկին Դըլօրէլի մօտ: Սիդօնին չէր կարողացել գալ, բայց այնտեղ էր Ռիսէր աւազը դրեթէ նոյնքան յուղուած, որքան պ. Դըլօրէլը, բարի Ռիսլէրը, վերջին ժամուայ բարեկամը, որ յանձն էր առել տխուր ձէսի ամբողջ ծախսը: Այդ էր պատճառը, որ սպակառքերը հիանալի էին, պաստանները՝ արծաթածոս և զիազարդը ծածկուած սպիտակ մանիշակներով ու վարդերով: Բուք փողոցի այդ խղճուկ ու մութ գաւիթում՝ մոմերի լոյսով զոլացող այդ համեստ սպիտակ փունջերը, այդ դողդոջուն և օրհնուած ջրով սրսկած ծաղկեկները՝ շատ նմանում էին այդ խնդիկի բախտին, որի ամենաաչին ժպիտները միշտ ողողուած էին եղել արցունքներով:

Յուղարկաւորութիւնը շարժուեց, քայլ առ քայլ, զանդազօքն, Մառէյի ծուռ ու մուռ փողոցներով:

Ամենից առաջ զնում էր Դըլօրէլը, որ ցնցւում էր հեկե-

կանքներից, զրեթէ նոյնքան խանդաղատուելով ինքն իր վրայ, իր զաւակը թաղող անբախտ հօր վրայ, որքան իր մեռած աղջկայ վրայ, և իր սնկեղծ վշտի խորքում պահպանելով իր մշտական մնափառ ընաւորութիւնը, որ մնում էր այստեղ, ինչպէս մի քար առուակի յատակում, անշարժ՝ յեղյեղուկ ալիքների տակ։ Ծէսի հանդիսաւորութիւնը, յուղարկաւորութեան և շարքը, որ անցնելիս կանգնեցնում էր փողոցային երթեեկութիւնը, սեազօղ կառքերը, Ռիսլէրների փոքրիկ կառքը, որ Սիդօնին ուղարկել էր հանդէսին չուք տալու համար, այդ բոլորը շոյում էր նրա ինքնասիրութիւնը, զմայլեցնում էր նրան, չը նայելով նրա անկեղծ վշտին։ Վերջապէս, չը կարողանալով այլ ևս գիմանալ, նա կուցաւ գէպի Ռօբրիկարը, որ գնում էր նրա կողքով, և ասաց.

—Տեսար։

—Ի՞նչ։

Եւ մեռելի դժբախտ հայրը, աչքերը սրբելով, շնչաց ոչ առանց հապարտութեան։

—Երկու սեփական կառք կայ…

Խեղճիկ Զիզի, որ այնքան բարի էր միշտ ու այնքան պարզասիրու։ Նրան չէր սազում ամենսին այդ մարդկանց ցուցամութիւնը, այդ հանդիսաւոր լալիկների շքախումբը։

Բարեբախտաբար, վերևում, արհեստանոցի պատուհանի առաջ, փակուած վանդակափեղկերի յետնում, կանգնած էր տիկին Դըլօրէլը, որին չէին կարողացել խանդարել նայելու իր աղջկայ յուղարկաւորութեանը։

—Մնաս բարեն… մնաս բարեն… շնչալով ասում էր խեղճ մայրը, զրեթէ ինքն իր հետ խօսելով և թափ տալով ձեռքը ծերունու կամ խենթի անգիտակից շարժումով։

Բայց որքան էլ մնդմ ձայնով ասէր նա այդ հրաժեշտի ողջոնը, Դէզիրէ Դըլօրէլը չէր կարող չը լսել։

Չ Ո Ր Ր Ո Ր Դ Գ Ի Ւ Ք

I

Փոքրիկ կապուտակ մարդու ֆանտասիկական առասպելը։

Զեր գործն է, կարող էք չը հաւատալ, բայց ես հաստատ հաւատում եմ փոքրիկ կապուտակ մարդու գոյութեանը։ Ասէք տեսած լինեմ նրան, չէ, չեմ տեսել երբէք, բայց իմ բարեկամ-Սեպտեմբեր, 1901.

ներից մէկը, մի բանաստեղծ, որին ես վերաբերւում եմ ամենայն վատահութեամբ, ինձ չատ անգամ պատմել է, որ ինքը մի գիշեր դէմ առ դէմ հանդիպել է այդ ասրօրինակ փոքրիկ գեռւկին, և ահա թէ ինչ հանգամանցներում:

Իմ բարեկամը սխալուել էր ու իր գերձակին մուրհակ էր տուել և ինչպէս բոլոր վառ երևակայութեան տէր մարդիկ, թուղթը ստորագրելուն պէս՝ իրան պարագից ազատուած էր համարել ու բոլորովին մոռացել մուրհակի մասին Արդ, մի գիշեր մեր բանաստեղծը վեր է թռչում քնած տեղից մի տարօրինակ աղմուկ լսելով իր ծխնելոյդի մէջ, Նա կարծում է սկզբում, թէ այդ մի սառած ճնճղուկ կը լինի, որ ուզում է տաքանալ հանգած կրակի գոլ չոգիում, կամ թէ հողմացոյցը կը լինի, որ ճնճղում է փոփոխական քամուց Բայց մի քիչ անց աղմուկը սաստկանում է և նա պարզ ջոկում է փողերի քսակի ճրճնգ-ճրճնգոց ու ինչ որ շղթայի շրխշրխկոց: Միենայն ժամանակ նա լսում է, որ մի բարակ ու սուր ձայն, նման չոփեկառքի հեռաւոր սուլոցի, և պարզ, ինչպէս աքրորականչը, գոռում է իրան կտորի վերսից: «Պայմանաժամկետ... պայմանաժամկետ»:

—Օ՛խ, Տէր իմ Աստուած... մուրհակս,—ասում է ինքն իրան խեղճ բանաստեղծը, յիշելով յանկարծ, որ գերձակի պարտքի ժամանակը լրանում է մի շաբաթից յետոյ, և մինչև առաւօտ մի կողքից միւսն է դառնում, քուն փնտոելով իր անկողնի բոլոր խորշերում և քնի տեղ գտնելով միմիայն այդ անիծած մուրհակի պատճառած մոտառնջութիւնը:

Միւս օրը, երկրորդ օրը, հետեւեալ բոլոր գիշերները նա զարթնում էր նոյն ժամին և նոյն ձևով, զարձեալ փողերի զըրընգոցը, շղթայի շրխշրխկոցը և բարակ ու սուր ձայնը, որ աղաղակում էր, քմծիծաղ տալսի. «Պայմանաժամկետ... պայմանաժամկետ», Ամենասարսափելին այն էր, որ քանի պայմանաժամկետ օրը մօտենում էր, ձայնը աւելի սուր ու անեղ էր դառնում, լի սպառնալքներով, որ գոյքը կը գրեն և դատարանի կը դիմեն:

Խեղճ բանաստեղծ. բաւական չէին ցերեկուայ յոզնութիւնները, ամբողջ քաղաքը ոտնատակ տալը մի քիչ փող ճարելու համար, այժմ էլ պէտք է այդ անգութ ձայնը զար նրան քնից ու հանգստից զրկելու: Բայց ումը կարող էր լինել այդ ֆանտաստիկան ձայնը: Ո՞ր չարանենգ էակը կարող էր այդպէս զուարձանալ նրան նահատակելով: Նա ուզում էր պարզել այդ հարցը: Եւ ահա, մի երեկոյ, փոխանակ պառկելու, նա հանդցնում է ճրագը, բանում է պատռհանը և նստած սպառում:

Կարիք չը կայ ձեղ ասելու, որ իրը քնարերգակ բանաստեղծ, իմ՝ բարեկամը ապրում էր շատ բարձր սենեակում, կը տուրների բարձրութեամբ Մի քանի ժամ շարունակ նա ոչինչ չէր տեսնում բացի այդ իրար աղմուած, իրար կոթնած տանիքների գեղանկար տարածութիւնից, որ ամեն ուղղութեամբ կարատուած էր վիթխարի անդունդների նման փողօջներով և որին քմահաճ զանազանակերպութիւն էին տալիս լուսնի շողքից ցողբին տուող ծինելոյզներն ու կատարները: Նիրհած ու խաւարամած Պարիզի վերեռում այդ տարածութիւնը կարծես մի երկրորդ քաղաք լինէր, մի օդային քաղաք, առկախ ու սաւառուն՝ խաւարի դատարկութեան և լուսնի շացուցիչ շողքի պրանքին:

Իմ բարեկամը երկար սպասութէ է: Վերջապէս, առաւօտուայ դէմ, ժամի երկուսին կամ երեքին, երբ խաւարի մէջ ցըցուած բոլոր դանդակատները սկսեցին իրար հաղորդել ժամը, մի թեթև քայլ սլացաւ նրա մօտով տանիքների կղմինդրների ու հերձաբարերի վրայով, և մի բարակ ու սուր ձայն սուլեց նրա ծինելոյզի խողովակով՝ «Պայմանաժամը, պայմանաժամը...» Այն ժամանակ մեր բանաստեղծը, մի քիչ կռանալով, տեսաւ անիծած սատանանածուաին, որ տանջումէ մարդկանց և մի շաբաթից ի վեր չէր թողնում, որ նա քնի Նա չը կարողացաւ ինձ հաստատասել թէ: Ինչ հասակ ունէր այդ սատանանածուաը, —լուսնի բաները ովէ հասկանում, երբեմն այնպիսի ֆանտաստիկական չափսեր է տալիս առարկաներին ու նրանց ստուերներին, որ մարդ մնում է աւշած: Նա այնքանն էր նկատել միայն, որ այդ տարօրինակ գեռուկը հագնուած էր բանկի փոքրաւորների նման, —կապոյտ ֆրակ արծաթէ կոճակներով, ծալովի գլխարկ, երիզաւոր թեքեր, —և որ նա կռնատակին ունէր գրեթէ իր մեծութեամբ կաշուէ թղթակալ, որի բանալին, որ կախուած էր մի երկար շղթայից, սաստիկ զբնուռմ էր ամեն քայլափոխին, ինչպէս և փողի տոպրակը, որ նա թափահարում էր միւս ձեռքափ: Այդպէս է ահա երևացել իմ բարեկամի աչքին փոքրիկ կապուտակ հոգեսորը, այն միջոցին, երբ արագ անցնելիս է եղել լուսնի շողքի միջով: Բարեկամս ասում էր, որ նա շատ վոազ ու զբաղկոտ տեսք ունէր և մի անգամից լոք էր տալիս փողոցի այս կողմից այն կողմը ու սլանում էր մի ծինելոյզից միւսը սլալով տանիքների կատարների վրայով:

Շատ մարդ ունէր այցելելու այդ անիծած սատանանածուաը: Այնքան վաճառականներ կան Պարիզում, այնքան զանազան մարդիկ, որոնք ամսավերջի վճարումներ ունեն, այնքան զբախտաներ, որոնք պարտամուրհակ են տուել կամ իրանց ստո-

բազրութիւնը գրել մի որ և է փոխանակազրի վրայ, Այդ ամենքին կապուտակ մարդուկը անցողակի նախազգուշացնում էր իր չարագոյժ աղաղակոսի, Նա ուղղում էր այդ աղաղակը գործարաններին, որոնք մութ ու համբ էին այդ ժամին, Գինանսիստների մեծ ապարանքներին, որոնք նիրհում էին իրանց ձեռդ պարտէզների խաղաղութեան մէջ, և աղքատ թաղերի խորքերում իրար վրայ կուտակուած անհաւասար ու պէսպէս տանիքներով հինգ ու վեց յարկանի տներին: «Պայմանաժամը... պայմանաժամը», Քաղաքի մի ծայրից միւսը անողորմ կերպով հնչում էր այդ բարակ ու զիշ ձայնը բիւրեղանման միժնողորտի մէջ, որ առաջանում է բարձոնքներում սաստիկ ցրտից ու լուսնի չողքից, Եւ որտեղով անցնում էր անիծածը, ամեն տեղ փախցնում էր մարդկանց քունը, անհանգստութիւն էր գցում մարդկանց սիրտը, յոգնեցնում էր մաքերն ու աչքերը, անքնութեան ու սրտնեղութեան անորոշ սարսու էր ազդում Պարիզի տներին, ներքեւի յարկից սկսած մինչև ամենավերին յարկը:

Ինչ ուղում էք մտածեցէք այդ առասպելի մասին, բայց յամենայն դէպս, ի հաստատութիւն իմ բարեկամի պատմածին, ևս կարող եմ հաւաստիցնել ձեզ, որ մի դիշեր, յունուար ամսի վերջերքին, Ֆրօմօն կրտսեր և Սիսլէր աւագ առևտրատան ծերունի զանձապահ Սիգիզմունդը քնից վեր թաւ Մօնուաժում, իր փոքրիկ բնակարանում, նոյն քմծիծաղ ձայնից, նոյն շղթայի շըխշխիկոցից և նոյն չարագոյժ աղաղակից.

«Պայմանաժամը»...

—Իրաւ որ,—մտածեց հալեորը գիք նստելով անկողնում, —վաղը չէ միւս օր ամսի վերջն է... Եւ ևս դեռ սիրտ ունեմ քնելու...

Արդարեւ, մեծ գումար էր հարկաւոր ամսավերջին, պէտք էր վճարել հարիւր հազար գրամսի երկու մուրհակով և այն էլ այնպիսի ժամանակ, երբ առաջին անգամ երևուն տարուց ի վեր Ֆրօմօնների առևտրատան սնդուկը անպայման դատարկ էր: Ի՞նչ պէտք է անէին: Սիգիզմունդը մի քանի անգամ փորձել էր խօսել այդ բանի մասին Ֆրօմօն կրտսերի հետ, բայց նա կարծես փախուսա էր տալիս գործերի ծանր պատասխանատուութիւնից, և գրասենեակով անցնում էր միշտ վոաղ-վուազ, միշտ տենդու, առանց տեսնելու և լսելու, թէ ինչ է կատարւում իր շուրջը: Գանձապահի անհանդիստ հարցերին, նա պատասխանում էր, բարակ բեղերը կրծելով.

—Լաւ, լաւ, սիրելի Պլանիւս... Մի անհանգստացէք... ևս կը կարգադրեմ...

Բայց այդ ասելիս նրա կերպարանքը պարզ ցոյց էր տա-

լիս, որ նրա միտքը բոլորովին ուրիշ բանով է գրադուած և հա-  
զարաւոր մղմն հեռու է այդ գործերից։ Գործարանում, ուր նրա  
սիրային կազը տիկին Ռիսլէրի հետ այլ ևս գաղտնիք չէր ոչ  
ոքի համար, շուկ էր տիրում, թէ Սիրճնին դաւաճանում է  
նրան և բոլորովին անբախտ մարդ է դարձնում, և, յիրաւի,  
սիրուհու խննթութիւնները նրան շատ աւելի էին զբաղեցնում,  
քան իրանց գանձապահի անհանգստութիւնը։ Ինչ վերաբերում  
է Ռիսլէրին, նրան երբէք չէին տեսնում. նա ամբողջ ժամանա-  
կը փակուած էր լինում վերնատանը, ուր հսկում էր իր մեքե-  
նայի խորհրդաւոր և անվերջանալի պատրաստութեանը։

Տէրերի այդ անտարերութիւնը գործարանի գործերի  
նկատմամբ, հսկողութեան այդ կատարեալ բացակայութիւնը՝  
փոքր առ փոքր կազմալուծութեան էին հասցրել ամեն ինչ։  
Բանուուրներն ու ծառայողները ինչ ուղղում էին՝ անում էին,  
ուշ էին գալիս աշխատելու, չուտ էին ծլկում, առանց ուշք դարձ-  
նելու հինաւուրց զանգակին, որ, այնքան տարիներ աշխա-  
տանքը զեկավարելուց յատոյ, այժմ կարծես արհաւիրքի ու խոր-  
տակման կոչ էր հնչեցնում։ Դեռ գործերը լաւ էին գնում, ո-  
րովհետեւ մի անգամ կարգի գցած առեարատունը ինքն ըստ ին-  
քեան կարող է շարունակել մի քանի տարի իր ընթացքը առա-  
ջին մղման ոյժի չնորհել, բայց ինչ քայլքայումն ու խառնաշփո-  
թութիւն էր տիրում այդ տուրեոյթ բարգաւաճութեան տակ։

Սիգիզմունովին այդ աւելի լաւ էր յայտնի, քան ում և  
իցէ, և ահա թէ ինչու էր նրան քնից վեր թոցրել կապուտակ  
մարդուկի աղաղակը, Գանձապահը մոմը վառել էր, կարծես թէ  
աւելի հեշտ գլուխ հանելու համար իր ուղեղում խոնուող, ի-  
րար անցնող ու մրրկուող յաւոտ մտքերից, և այդպէս անկող-  
նում նստած խորհում էր... Ո՞րտեղից կարող էր գանել այդ  
հարիւր հազար ֆրանկը։ Անկասկած իրանց առեարատանը այդ  
գումարից աւելի պարտք կը լինէին ուրիշները. հին հաշիւներ  
էին մնում ընկած յաճախորդների մօտ, Պրօշասօնների և ուրիշ-  
ների ընթացյիկ հաշուից էլ մի բան մնում էր. բայց ինչպէս  
կարող էր նա այնքան ստորանալ, որ գնար հաւաքելու այդ  
հին պարտքերը։ Բարձր առեարի մէջ այդպիսի բաներ ընդուն-  
ուած չեն. չարչի հօ չեն, Եւ սակայն այդ աւելի լաւ էր, քան  
եթէ բողոքի տային նրանց մուրհակները... Օ՞հ, այն միտքը,  
թէ բանկի փոքրաւորը, վստահ ու ապահով կերպարանքով, կը  
մօտենայ նրա ցանցապատին ու հանգիստ կերպով կը գնի մուր-  
հակները դարակի վրայ, իսկ ինքը, Պլանիւսը, Սիգիզմունդ  
Պլանիւսը, ստիպուած կը լինի ասելու.

—Յետ վերցրէք ձեր մուրհակները... Փռդ չունեմ զհարելու...

Ոչ, ոչ! Այդ անկարելի բան էր, Բոլոր ուրիշ ստորացումները գերադասելի էին դրանից:

—Վճռուած պրծած է... Վաղը կ'երթամ ժողովարարութեան, —հառաչում էր խեղճ գանձապահը:

Եւ մինչդեռ նա այդպէս այրւում փոթոթւում էր առանց կարողանալու աչք փակել մինչև լոյս, կապուտակ մարդուկը, շարունակելով իր պատոյաք, զնաց թափահարելու իր փողի տոպրակը ու իր շղթան հօմարչէ բուլվարի մի վերնատան վերնում, ուր Դէզիրէյի մնանելուց յետոյ տեղափոխուել էին աղբելու հոչակաւոր Դըլօրէն ու իր կինը:

«Պայմանաժամը, պայմանաժամը...»

Աւազ, խեղճ կաղիպի գուշակութիւնը ճիշտ դուրս եկաւ, նրա մահից յետոյ ախիին Դըլօրէլը չը կարողացաւ երկար ժամանակ շարունակել մօդային թռչնիկների ու ճանձերի գործը: Աչքերը փշացել էին արտասուքից և պառաւած զողզոջուն ձեռքերը չեին կարողանում այլ ևս ուղղահայեաց ցցել կօիբրի բիներին, որոնք, չը նայենով նրա բոլոր ջանքերին, ողորմելի ու տիսուր տեսք էին ունենում: Պէտք էր թողնել այդ գործը: Այն ժամանակ այդ կորովի կինը սկսեց կարուձնով պարապել ժամեակներ, ասղեգործեր էր կարկատում և քիչ-քիչ իջնում էր հասարակ բանուոր կնոջ զրութեան: Բայց նրա շարունակ նուազող վաստակը հաղիւ էր բաւականանում անակեսութեան ամենազլիսաւոր անհրաժեշտութիւններին, և Դըլօրէլը, որին իր in partibus (անպաշտօն) դերասանի անիծեալ կռչումը ստիպում էր անվերջ ծախսեր անել, արդէն սկսել էր ընկնել պարագերի մէջ: Նա պարտական էր իր դերակին, հօշկակարին, շապկակարին, բայց նրան ամենից շատ անհանգուացնողը այն երեկի նախաձաշներն էին, որ նա ապառիկ կերել էր բուլվարի ճաշարանում իր թատրոնապետութեան միջոցին:

Հաշիւը հասնում էր երկու հարիւր յիսուն ֆրանկի, որ պէսք էր վճարել յունուարի վերջին, և այս անգամ այլ ևս ամեններն յօյս չը կար, որ թոյլ տային պայմանաժամը նորից յետաձգել, ուստի հասկանալի է, որ կապուտակ մարդուկի աղաղակը սարսուռ ցցեց նրա ամբողջ մարմինը...

Մի օր է միայն մնում մինչև պայմանաժամը: Միմիայն մի օր՝ երկու հարիւր յիսուն ֆրանկ գտնելու համար, եթէ նա չը դտնի այդ գումարը, նրանց տան մէջը ամբողջապէս կը ծախսեն: Կը ծախսեն այդ՝ տրւն գնելու օբից միննոյնը մնացած խղճուկ, գծուծ ու անյարմար կահ-կարասիները, որոնք քաղցր են, սա-

կայն, չնորհիւ այն յիշողութիւնների, որոնք կապուած են նրանց քերծուածքների ու մաշուածքների հետ; Կը ծախեն մօդային թռչնիկների ու ճանճերի երկարուկ սեղանը, որի վրայ նա ընթրել է քսան տարի շարունակ: Կը ծախեն Զիզիի մեծ բազկաթոռը, որին չեխն կարողանում առանց արցունքի նայել և որ կարծես իր մէջ պահել էր մի բան այն քաղցր էակից, նրա շարժումներից, զիրքից և նրա երազանքի ու աշխատանքի երկար օրերի յոզնածութիւնից: Տիկին Դըլօբէլը վշտամահ կը լինէր անշուշտ, եթէ այդպէս չքանային այդ քաղցր յիշողութիւնները...

Մտածելով այդ բանի մասին, թշուառ գերասանը, որին իր հաստակաշի եսականութիւնը այնուամենայնիւ միշտ չէր կարողանում պաշտպանել խզի խայթոցներից, չուռ էր գալիս անկողնում մի կողքից միւսի վրայ, խորը հառաջանքներ արձակելով և շարունակ աչքի առջնը տեսնելով Դէզիրէյի մանրիկ ու զունանակ կերպարանքը, այն պաղատական ու քնքոյց հայեացքով, որ նա անձկօրէն դարձնում էր գէպի ինքը մահուան բռպէին, երբ մեղմիկ ձայնով խնդրում էր նրանից հրաժարուել... հրաժարուել... ինչից էր ուզում որ իր հայրը հրաժարուի: Նա մեռաւ առանց այդ ասելու, բայց Դըլօբէլը այնուամենայնիւ մի քիչ հասկացել էր նրա միտքը, և այն օրից սկսած այդ անսիրտ բնաւորութեան մէջ ներս էր թափանցել մի տեսակ վըրդովմունք ու կասկած, որ այժմ, այս զիշերային պահին, տանջում էր նրան, խառնուելով փողի հոգսի հետո...

«Պայմանաժամք... պայմանաժամք»...

Այս անգամ պ. Շէրի ծինհելոյզումն էր լուսում կապուտակ մարդուկի շարագոյժ աղաղակը:

Պէտք է ձեզ ասել, որ մի ժամանակից ի վեր պ. Շէրը ձեռնարկել էր խոշոր վաճառականական գործեր, սկսել էր պարապել շատ անորոշ, չափազանց անորոշ (ոտանկայ) տեսարով, որ շատ փող էր կլանումնրանից: Արդէն մի քանի անգամ Ռիսլէրն ու Սիդնին ստիպուած էին եղել վճարել իրանց հօր պարագերը այն խիստ պայմանով, որ այնուհետե նա հանգիստ կը մնայ, էլ գործեր չի սկսի, բայց այդ մշտական սուզումները անհրաժեշտ էին նրա գոյութեան համար: Նա ամեն անգամ ջրի երեսն էր անում, աւելի մեծ կորովով, աւելի ևս եռանգուն գործունէութեան պատրաստակամութեամբ: Փող չունեցած ժամանակը իր ստորագրութիւնն էր տալիս պ. Շէրը: Նա նոյն իսկ սարսափելի ի չարն էր գործ գնում իր ստորագրութիւնը, յոյս գնելով միշտ, թէ ձեռնարկութեան օգուտից կը տայ պարտքերը: Բայց, հակառակի նման, օգուտ երբէք չէր երեսում, մինչդեռ

ստորագրած մուրհակները ամբողջ Պարիզում մի քանի ամիս պտոյտ գործելուց յետոյ, յուսահատեցնող ճշտապահութեամբ վերադառնում էին տուն բոլորովին սեացած շրջագայութեան ժամանակ վրան կիտուած հիէրօզիֆներից:

Յունուարի տալիքն էլ շատ խոչոր գումար էր, և լսելով կապուտակ մարդուի ձայնը, նա յիշեց յանկարծ, որ ոչ մի սու չունէր վճարելու համար Այ քեզ խայտառակութիւնն Պէտք էր նորից ստորանալ Ծիսէրի առաջ, մերժման վտանգին ենթարկուել, խոստովանել, որ խոստինազանց է եղել... Այդ մտածմունքների աղղած շաւը աւելի ևս սաստկանում էր չնորհիւ զիշերային խաղաղութեան, ուր աչքը անզբաղ է և ուշքը առիթ չունի ցրուելու, և հորիզոնական դիրքից, որ կատարեալ անշարժութիւն տալով մարմնին, անպաշտպան միտքը մատնում է իր երկիւզներին ու հոգսերին, Ռոպէն մի անգամ պ, Նէքը վառում էր լամպը, լրազիր վերցնում ձեռքը և զուր ջանք գործ դնում կարդալու, ի մեծ տհաճութիւն տիկին Նէքի, որ անքում էր կամաց ձայնով և, լոյսը չը տեսնելու համար, շուր էր զալիս պատի կողմը:

Եւ այդ միջոցին դժոխային կապուտակ արարածը, հիացած իր չարանենգութիւնից, քմծիծաղ տալով գնում էր մի ուրիշ տեղ զնզգնշացնելու իր փողի տոպրակն ու շղթան: Ահա նա Վիյէլզօդրիէտ փողոցում, մի մեծ գործարանի վերեւում, ուր բոլոր պատուհանները մութն են, բայց մէկից, պարտէզի խորքում, առաջին յարկում...

Չը նայելով, որ շատ ուշ էր, ժօրժ Ֆրօմօնը դեռ չէր պատկել քնիլու: Կրակի առաջը նստած, զլուխը երկու ձեռքով բռնած, այնպիսի կոյր ու համր կենարոնացման մէջ, որ աղդում են անուղղելի դժբախտութիւնները, նա մտածում էր Սիդօնի մասին, որ քնած էր այժմ վերեի յարկում: Այդ կինը ուղղակի գտուացնում էր նրան: Նա հաստատ համոզուած էր, որ Սիդօնին դաւաճանում է իրան՝ կազարօն անունով, բայց կազարօնի կոչուող տուլուզացի տէնօրի հետ, որ մուաք էր զըտել նրանց մօս չնորհիւ տիկին Դօրոսնի: Ոքանն ժամանակի է նա աղաչում է Սիդօնիին չընդունել այլևս այդ մարդուն, բայց Սիդօնին ականջ չէ դնում նրան, և հէնց այսօր, մի մեծ պարահանդէսի առիթով, որ տալու էր շուտով, նա կարական կերպով յայտնեց ժօրժին, որ ինչ էլ լինի հրաւիրելու է իր տէնօրին:

—Ուրեմն ձեր սիրեկանն է նա,—զուաց ժօրժը բարկացած ու աչքը նրա աչքերին յառած:

Սիդօնին չէ չասաց. նա նոյն իսկ երեսը շուր չը տուեց, միայն թէ սաստիկ սանութեամբ և իր զզուելի թեթե ժաղի-

առվ յայտարարեց նրան, որ ինքը ոչ ոքի իրաւունք չի տուել դատելու իր արածները կամ արգելք հանդիսանալու նրանց և որ ինքը ուզում է ազատ լինել ու նրան էլ, ինչպէս Ռիսլէրին, թոյլ չի տալ բռնակալ գառնալ իր գլխին, նրանք այդպէս մի ամրող ժամ անց էին կացրել փակ ու պատուհանների վարագոյրները իջնորած կառքում, իրար հետ վիճելով, միմեանց վիրաւորանք-ներ հասցնելով, գրեթէ ծեծկուելով:

Ո՞վ կարող էր հաւատալ, որ նա այդ կնոջ համար զոհել էր ամեն ինչ, իր կարողութիւնը, պատիւը, մինչև իսկ սքանչելի կլէրին, որ այժմ իր երեխայի հետ քնած էր կողքի սե-նսակում, այդ երջանկութիւնը, որ պատրաստ նրա ձեռքի մէջն էր և որ նա արհամարհել էր այդ անզգամի համար... Եւ այժմ այդ կինը յայտնում էր նրան, որ ինքը չի սիրում նրան և որ սիրահարուած է մի ուրիշի վրայ: Իսկ ինքը վատարար գեռ սիրում էր նրան: Ինչո՞վ էր նա կախարդել նրան:

Լի զայրոյթով, որ եռում էր նրա ամրողջ էութեան մէջ, Փօրժ Ֆրամոնը վեր թռաւ տեղից ու սկսեց տենդային կերպով քայլել սենեակում, և նրա քայլերը հնչում էին համր տան լը-ռութեան մէջ իրրե մի մարմարացած անքնութիւն... Իսկ այն կինը քնած էր վերեռում: Նա քնած էր հանգիստ՝ իր անխղճմը-տանք բնաւորութեան արտօնութեամբ: Ո՞վ զիտի, գուցէ և մտածում էր իր կաղաքօնիի մասին:

Երբ այդ բանը անցնում էր Փօրժի մտքով, նրա մէջ խօլ յանկութիւն էր ծագում բարձրանալ վերև, զարթեցնել Ռիսլէրին, ամեն ինչ ասել նրան և կորուստի մատնել իրան ու Սիրծնիին: Ի՞նչ տիմար մարդ էր այդ խարսուած ամուսինը: Ինչո՞ւ չէր կարգին հսկում կնոջը: Այդպիսի սիրուն, մանաւանդ այդպիսի արտատառը կին ունենալիս պէտք է անպատճառ աչքը վրան պահել:

Եւ հէնց այդ ժամանակ, երբ նա մտատանջւում էր այդ դաժան ու ապարդին հոգսերով, յանկարծ կապուտակ մարդուի չարագոյժ աղաղակը հնչեց քամու աղմուկի մէջ:

«Պայմանաժամը... պայմանաժամը...»

Թշուան մարդ: Սիրունու դէմ զայրացած, նա բոլորովին մտահան էր արել այդ: Եւ սակայն նա վաղուց գիտէր, որ մօ-տենում է յունուարի այդ սարսափելի ամսավերջը: Քանի՞քանի անզամ, երկու ժամագրութիւնների արանքում, այն միջոցներին, երբ նրա միաքը, մի բոպէ աղատուելով Սիրծնիից, սկը-սում էր զրաղուել գործերով և կեանքի իրականութեամբ, քա-նի՞քանի անզամ նա ասել էր ինքն իրան: «Այդ օրը մեր կոր-ծանման օրն է լինելու»: Բայց ինչպէս միշտ, երբ մարդիկ ապ-

րում են՝ հարբածի նման անձնատուր եղած գառանցանքների, այնպէս էլ այս դէպքում նրա թուլամորթութիւնը նրան մոտածել էր տալիս, թէ շատ ուշ էր եղածը ուզզելու համար, և նա իսկոյն և եթ զլխից հանում էր այդ հոգսերը և աւելի ևս սասարիկ էր անձնատուր լինում իր անառակ մաքերին, որպէս զի մոռացութիւն գտնէր նրանց մէջ:

Բայց այդ բոպէին այլ ևս համար չը կար մոռացութիւն գտնելու: Նա պարզ ու որոշ տեսնում էր իր կործանումը, և Սիդիզմոնդ Պանիւսի չոր ու լուրջ կերպարանքը ցցւում էր նրա առաջ իր՝ կարծես ըրիչով քանդակուած գծերով, որոնց դաժանութիւնը չէր մեղմանում ոչ մի արտայայտութեամբ, և իր գերմանաշվեյցարացու նզրիկ աչքերով, որոնք մի ժամանակց ի վեր հալածում էին նրանց անողոք հայեացքով...

Բայց նա չունի այդ պահանջուած հարիւր հազար ֆրանկը, և չը զիտի՛ օրտեղից կարող է գտնել Վերջին վեց ամիսները, իր սիրուհու աւերիչ քամահաճոյների համար փող ձեռք բերելու յոյսով, սասարիկ շատ էր խաղացել և ահազին գումարներ տարուել: Այդ բաւուկան չէր, աւելացաւ բանկիրներից մէկը մանակացումը և իրանց ողորմնի հաշուեկշիռը... Միմիայն գործարանն էր մնում նրան, այն էլ ինչ սարսափելի վիճակի մէջ:

Ուր գնար այժմ, ինչ անէր:

Այն, ինչ որ մի քանի ժամ առաջ նրան թւում էր մի քաօս, մի մրրիկ, ուր ոչինչ չէր կարելի այլ ևս որոշակի տեսնել և որի խառնաշփոթութիւնը այնուամենայնիւ մի փոքրիկ լոյս էր նրա համար, նրան երեսում էր այժմ սոսկալի պարզութեամբ: Դրամարկղը զատարկէ, գաները՝ փակ, մուրհակները բուզրի ենթարկուած, առևտրական տունը աւերուած: Ահա թէ ինչ էր տեսնում նա, որ կողմից էլ որ նայէր զործին ևւ որովհետեւ այդ բոլորի վրայ աւելանում էր և Սիդօնիի զաւանաութիւնը, թշուառականը, զլուխը կորցրած ու չիմանալով ձեռքը ինչին գցի այդ անոելի նաւարեկութեան ժամանակ, յանկարծ մի ցաւազին ազաղակ, մի հառաչանք արձակեց, կարծես թէ նախախնամութեան զիմելով:

— Ժօրժ, Ժօրժ, ես եմ... ի՞նչ է պատահել քեզ:

Նրա առաջ կանգնած էր կինը, կինը, որ այժմ ամեն զիշեր սպասում էր նրան, կարօտազին աչք էր պահում ճանապարհին, միւչեւ որ վերադառնար ժողովարանից, որովհետեւ խեղճը դեռ ևս կարծում էր, թէ այնտեղ է նա անց կացնում երեկոները: Տեսնելով, որ ամուսինը փոխում է, մոալլանում է օրէցօր, Կէրը միտք էր անում, թէ երեկ նա փողի նեղութիւն

ունի, թէ անշուշտ մեծ գումար է տարուել թղթախաղում։ Նրան ասել էին, որ մարզը շատ է խաղում, և չը նայելով այն անտարբերութեանը, որով ժօրժը վերաբերում էր նրան, նա անհանգատանում էր նրա պատճառով, ուզում էր, որ նա յայտնի նրան իր գաղտնիքը, առիթ տայ նրան մեծահոգութիւն ու քնքութիւն ցոյց տալու Այս զիշեր նա լսում էր, որ ամուսինը շատ ուշ ժամանակ քայլում է իր սենեակում։ Եւ որովհետեւ աղջիկն էլ միւս կողմից սաստիկ հաղում էր և ամեն րոպէ խնամք էր պահանջում, նա բաժանել էր իր հոգսերը երեխայի և հօր տանջանքների մէջ, և մնացել էր նստած, ականջը սրած բոլոր շշուկներին և անձնատուր եղած գորովալից ու վշտալից անքնութեան, որպիսի վիճակի մէջ կանաքը հաւաքում են իրանց ամբողջ կորովը իրանց բազմապատիկ պարտականութիւնների ծանր բեռը, կրելու համար. վերջապէս, երեխան քուն եղաւ և մայրը, լսելով ամուսնու հեկելանքը, վագ տուեց նրա սենեակը։

Օ՛հ, երբ նա տեսաւ կնոջը իր առաջ, այնքան քնքուշ, այնքան յուղուած և այնքան գեղեցիկ, ինչ սարսափելի խղճի խայթոցներ, թէն ուշ, զարթնեցին նրա մէջ։ Այս, նա ինքն էր, նրա մտերիմ կողակիցը։ Ի՞նչպէս էր կարողացել ինքը եքանել նրան։ Երկար, շատ երկար ժամանակ նա լուռ ու մունջ լաց եղաւ կնոջ ուսին յենած։ Եւ շատ լսւ էր, որ նա չէր կարողանում խօսել, ապա թէ ոչ նա ամեն ինչ, ամեն ինչ կ'ասէր։ Թշուառականը պահանջ էր զգում սիրտը բանալու, անդիմադրելի բաղձանք՝ ինքն իրան մեղադրելու, ներողութիւն խընդրելու, նուազեցնելու խայթոցների ծանրութիւնը, որ խորտակում էր նրա սիրտը։

Կլէրը ազատեց նրան խօսելու նեղութիւնից։

— Անպատճառ թուղթ ես խաղացել, տարուել ես, չէ... և երեխ շատ։

Նա զլիսով զրական նշան արեց, իսկ յետոյ երբ կարող եղաւ խօսել, նա խոստվանեց, որ ինքը հարիւր հաղար ֆրանկի պէտք ունի վաղը չէ միւս օրը և չը գիտէ որտեղից ճարել այդ գումարը։

Կլէրը ոչ մի յանդիմանութիւն չարեց նրան։ Նա այն անհատներիցն էր, որոնք դժբախտութեան առաջ մտածում են միայն օգնելու մասին առանց ում և իցէ դատապարտելու։ Իր արտի խորքում նա նոյն իսկ օրհնում էր այդ աղէտը, որ մարդուն մօտեցնում էր նրան և մի կապ էր գառնում իրանց գոյութիւնների մէջ, որոնք այն աստիճան անշատուած էին երեկար ժամանակից ի վեր։ Նա մտածեց մի րոպէ և կայացնելով իր մէջ մի գծիո, որ շատ ծանր էր նրա համար, նա ասաց.

—Դեռ ճար կարելի է աներ Ես վաղը կ'երթամ Սագինի Գարդինուա պապից խնդրելու այդ փողը:

Ժօրժը երբէք չէր համարձակուիլ խօսել նրա հետ այդ բանի մասին: Նրա մտքովն անդամ չէր կարող անցնել այդ: Կլէրը այնքան հպարտ էր, իսկ ծեր Գարդինուան այնքան բիրտ Շատ մեծ զոհ էր այդ, որ կլէրը յանձն էր առնում նրա համար, սիրոյ փայլուն ապացոյց նրա կողմից: Ժօրժին յանկարծ տիրեց սրտի այնպիսի ջերմութիւն, այսպիսի ցնծութիւն, որ առաջ է գալիս վտանգը անցնելու յետոյ: Կլէրը թւում էր նրան, իրը մի գերբնական էակի, որ բարութեան և հանգստացման շնորհք ունէր, ինչպէս միւսը, այն վերևինը, խենթացնելու և քայլայելու շնորհք ունէր: Նա ուրախութեամբ ծւնկի կը չփէր այդ գեղեցիկ դէմքի առաջ, որ շրջապատուած էր գիշերուայ համար հիանալի հիւսուած ու ծամերի շրջանով, իրը փակուն կապտաւուն լուսալսակով, և որի գծերի փոքր ինչ խիստ կանոնաւութիւնը փարատում էր քնքութեան հրաշալի արտայայտութիւնից:

—Ո՞րքան բարի ես... Կլէր:

Առանց ոչինչ պատասխանելու, Կլէրը տարաւ նրան դէպի իրանց երեխայի օրորոցը:

—Համբուրիր փոքրիկին... ասաց նա մեղմօրէն:

Նրանք կանոնած էին օրորոցի մօտ իրար կողքի, փաթաթուած վարագոյրի շղարչի մէջ, զլուխները խոնարհած այդ խաղաղուած, բայց գետ ցաւիցը փոքր ինչ հեացող փոքրիկ հնչի վրայ, և Ժօրժը վախեցաւ զարթեցնի աղջկան ու մոլեզին համբուրեց կնոջը:

Դեռ երբէք կապուտակ մարդուկի երեսումը այդպիսի աղջեցութիւն չէր գործել որ և է ընտանիքում: Սովորաբար որտեղով անցնում է այդ զարհուրելի սատանածուտը, նա բաժանում է իրարից ձեռքերը և սրտերը, հեռացնում է մաքերը ամենասիրելի էակներից և զարթեցնում նրանց մէջ հազար ու մի հոգսեր ու ահեր, հնչեցնելով կտուրների վրայ իր շղթան և իր չարագոյժ աղաղակը:

«Պայմանաժամը... պայմանաժամը...»

Թարգմ. Տ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

(Կը օարունակուի)